



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/528/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

09 դեկտեմբերի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարությանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի դեկտեմբերի 9-ին քննելով ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Էմմա Նորայրի Պալյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/528/2025 վարչական գործը.

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով armlur.am կայքում 2025 թվականի հոկտեմբերի 10-ի **«ՔՊ-ական Էմմա Պալյանը մեկ հայտարարագրում 3 սխալ է թույլ տվել, թաքցրել եկամտի աղբյուրը»** վերտառությամբ հրապարակումը, իրականացրել է ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Էմմա Պալյանի կողմից Հանձնաժողով ներկայացված պաշտոնատար անձի՝ 2022-2024 թվականների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի

հայտարարագրերում հայտարարագրված տվյալների վերաբերյալ մամուլում տեղ գտած հրապարակման մեջ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքում արձանագրվել է.

1.2 Պաշտոնատար անձի 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի (այսուհետ նաև՝ Հայտարարագիր)՝ «Գ.1.1 Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում էմմա Պալյանը հայտարարագրել է 1,500,000 ՀՀ դրամի չափով ստացված եկամուտ, սակայն եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը, ինչպես նաև նրա հասցեն դաշտերում գծիկ «-» է դրված, փոխարենը «Նկարագրություն» դաշտում լրացված է «ՌԴ-ից՝ հարազատի կողմից ուղարկված գումար» տեղեկատվությունը, իսկ «Հայտարարատուի և եկամուտ վճարողի միջև առկա կապի բնույթը» դաշտում նշված է՝ «բարեկամ»:

1.3 Նույն հայտարարագրի «Գ.1.2 Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում էմմա Պալյանը հայտարարագրել է ընդհանուր՝ 25,000,000 ՀՀ դրամ, որից 4,000,000 ՀՀ դրամը որպես սպառողական վարկ և 21,000,000 ՀՀ դրամը՝ հիպոտեկային վարկ: Վերոնշյալ տվյալները համադրելով էմմա Պալյանի 2023 թվականի տարեկան հայտարարագրի նույն բաժնում հայտարարագրված տվյալների հետ՝ արձանագրվել է, որ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հիպոտեկային վարկի մայր գումարի մնացորդը կազմել է 21,000,000 ՀՀ դրամ, իսկ 2022 թվականի տարեկան հայտարարագրում՝ 20,643,674 ՀՀ դրամ:

1.4. Նույն հայտարարագրի՝ «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում էմմա Պալյանն իր ամուսնու՝ Ալբերտ Մարտիրոսյանի վերաբերյալ տվյալներում ներկայացրել է, որ վերջինս չի աշխատում, մինչդեռ ՊԵԿ էլեկտրոնային շտեմարանում առկա տվյալների համաձայն՝ Ալբերտ Մարտիրոսյանը 2023 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև օրս աշխատում է «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ում որպես «Անտառապետ», իսկ Ալբերտ Լորիսի

Մարտիրոսյանի 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի՝ «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում առկա են «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ից ստացված աշխատավարձի վերաբերյալ տվյալներ:

1.5 Հանձնաժողովը ձեռք բերված և ուսումնասիրված վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի նոյեմբերի 27-ին էմմա Պալյանին հասցեագրել է թիվ 01/4539-2025 գրությունը՝ հրավիրելով Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու և գործի քննությանը մասնակցելու: Նշված գրությունը էմմա Պալյանն ստացել է 2025 թվականի դեկտեմբերի 2-ին՝ դրա մասին հավաստումն ուղարկելով Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

1.6 2025 թվականի դեկտեմբերի 5-ին էմմա Պալյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 505/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.7 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված էմմա Պալյանի բացակայությամբ 2025 թվականի դեկտեմբերի 9-ին՝ ժամը 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Էմմա Պալյանի կողմից վարույթի ընթացքում ներկայացվել է հետևյալ բովանդակությամբ պարզաբանում.

«...Ի պատասխան Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ինձ հասցեագրված 01/4539-2025 գրության՝ տեղեկացնում եմ, որ իմ կողմից հանձնաժողով ներկայացված 2024 թվականի տարեկան հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում հայտարարագրված 1,500,000 ՀՀ դրամի

չափով ստացված եկամտի վերաբերյալ պատրաստ են կատարել լրացումներ և նշել պահանջվող տվյալները, այն է՝ նշել եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն այլ կապի բնույթը: Մյուս երկու կետերի՝ մասնավորապես «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում և «Գ.1.2. Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում տեղ գտած վրիպակները տեխնիկական բնույթի են, որոնք ևս պատրաստ են շտկել:

Ի լրումն իմ կողմից 02.12.2025 թվականին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին հասցեագրած գրության՝ ներկայացնում եմ, իմ՝ 2024 թվականի տարեկան հայտարարագրի՝ «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում հայտարարագրված 1,500,000 ՀՀ դրամի չափով ստացված եկամտի վերաբերյալ լրացումները և նշում եմ պահանջվող տվյալները, այն է՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն այլ կապի բնույթը:»:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/528/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում հետևյալը՝

3.1 Էմմա Նորայրի Պալյանը 2021 թվականի մարտի 22-ին ԱԺ պատգամավոր է ընտրվել «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով:

(<http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=1426&lang=arm>)

3.2 Պաշտոնատար անձի՝ 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի՝ «Գ.1.1 Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում Էմմա Պալյանը հայտարարագրել է 1,500,000 ՀՀ դրամի չափով ստացված եկամուտ, սակայն եկամտի վերաբերյալ տվյալներում «Եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը և հայրանունը», ինչպես նաև «Եկամուտ վճարողի հասցեն» դաշտում գծիկ «-» է դրել, միաժամանակ

«Նկարագրություն» դաշտում լրացրել է «ԴԴ-ից՝ հարազատի կողմից ուղարկված գումար» տեղեկատվությունը, իսկ «Հայտարարատուի և եկամուտ վճարողի միջև առկա կապի բնույթը» դաշտում նշվել է բարեկամ:

Նույն հայտարարագրի «Գ.1.2 Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում էմմա Պալյանը հայտարարագրել է ընդհանուր՝ 25,000,000 ՀՀ դրամ, որից 4,000,000 ՀՀ դրամը որպես սպառողական վարկ և 21,000,000 ՀՀ դրամը՝ հիպոտեկային վարկ: Միաժամանակ, էմմա Պալյանն իր՝ **2023 թվականի** տարեկան հայտարարագրի նույն բաժնում հիպոտեկային վարկի մայր գումարի մնացորդը հայտարարագրել է **21,000,000 ՀՀ դրամ**, իսկ **2022 թվականի** տարեկան հայտարարագրում՝ **20,643,674 ՀՀ դրամ**:

3.3 Նույն հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներ տվյալները» ենթաբաժնում էմմա Պալյանը Ալբերտ Մարտիրոսյանին ներկայացրել է որպես հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամ՝ ամուսին: Ալբերտ Մարտիրոսյանի պաշտոնի (աշխատանքային գործունեության) վերաբերյալ տվյալներում էմմա Պալյանը նշել է, որ վերջինս չի աշխատում, մինչդեռ ՊԵԿ էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Ալբերտ Լորիսի Մարտիրոսյանը «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ից ստացել է աշխատավարձ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական(...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագրում նշվում են նաև հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձնագրի տվյալները, հանրային

ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), քաղաքացիությունը, հասցեն, **պաշտոնը (աշխատանքային գործունեությունը):**

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եկամուտը հայտարարագրելիս նշվում են՝ եկամտի տեսակը, եկամտի ստացման աղբյուրը՝ **եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, եկամուտ վճարողի և նրանց միջև առկա կապի բնույթի** մասին տեղեկատվություն:

4.4 Օրենքի 41-րդ հոդվածի 6.2-րդ մասի համաձայն՝ վարկը հայտարարագրելիս նշվում են նաև վարկի նպատակային նշանակությունը, տարեկան հայտարարագրի դեպքում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի, պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերում՝ համապատասխանաբար պաշտոնեական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ **վարկի մայր գումարի մնացորդի չափը**, իսկ հիպոտեկի դեպքում՝ նաև հիպոտեկի առարկան և դրա գտնվելու վայրը:

4.5 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելը՝ առաջացնում է նախազգուշացում:

4.6 Նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջներին կամ ներկայացման կարգին համապատասխան չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.13 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի N 01-Լ որոշման հավելվածի՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի,

եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի լրացման» ուղեցույցի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պաշտոնատար անձանց «Անձնական տվյալներ» բաժնում առկա է «Ընտանիքի կազմ» բաժինը, որտեղ պաշտոնատար անձը պարտավոր է լրացնել և պահպանել իր ընտանիքի բոլոր անդամների տվյալները՝ նշելով նրանց կարգավիճակը:

Նույն հավելվածի՝ Գ.1.1. «Հաշվետու տարվա եկամուտները» բաժնի դաշտերը լրացնելիս հայտարարատու պաշտոնատար անձը պարտավոր է նշել եկամուտ վճարող ֆիզիկական անձի՝ անունը, ազգանունը, հայրանունը:

Նույն հավելվածի՝ Գ.1.2. «Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնի՝ «Վարկի մայր գումարի մնացորդի չափը» դաշտում հայտարարատու պաշտոնատար անձը լրացնում է վարկի մայր գումարի մնացորդի չափը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, «Վարկի նպատակային նշանակությունը» դաշտում նշվում է, թե ինչ նպատակով է ստացվել վարկը (սպառողական վարկ, հիփոթեքային վարկ, լոմբարդային վարկ, գյուղատնտեսական վարկ և այլն), «Հիփոթեքի առարկան» դաշտում նշվում է հիփոթեքի առարկա հանդիսացող անշարժ գույքի տեսակը՝ հողամաս, անհատական բնակելի տուն, բնակարան, շենք և շինություններ և այլն, «Հիփոթեքի առարկայի գտնվելու վայրը» դաշտում նշվում է հիփոթեքի առարկա հանդիսացող անշարժ գույքի գտնվելու հասցեն:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել հայտարարատու անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորումների վերլուծությունից բխում է, որ հայտարարատու պաշտոնատար անձը պարտավոր է հայտարարագիրը լրացնել օրենքով սահմանված կարգով, ամբողջական և հավաստի ձևով՝ մասնավորապես եկամուտը հայտարարագրելիս, ի թիվս այլնի, նշելով եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, եկամուտ վճարողի և նրանց միջև առկա կապի բնույթը: Հայտարարատուն վարկը հայտարարագրելիս պետք է նշի վարկի նպատակային նշանակությունը, տարեկան հայտարարագրի դեպքում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկի մայր գումարի մնացորդի չափը, իսկ հիպոտեկի դեպքում՝ նաև հիպոտեկի առարկան և դրա գտնվելու վայրը:

Օրենքի 39-րդ հոդվածի իրավակարգավորման համաձայն՝ հայտարարագրում ներառվում է նաև հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի վերաբերյալ տվյալներ, ի թիվս այլնի, պաշտոնը (աշխատանքային գործունեությունը):

Վերոնշյալ տվյալների հայտարարագրման օրենսդրական նպատակը կայանում է պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց շրջանակի բացահայտումը, շահերի բախման հնարավոր իրավիճակների կանխարգելումը, **ինչպես նաև նրանց գույքային դրության բացահայտումը:**

Սույն դեպքում պաշտոնատար անձի կողմից ներկայացված հայտարարագիրը **ներկայացվել է դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտմամբ, մասնավորապես.**

Էմմա Պալյանն իր՝ 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի՝ «Գ.1.1 Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում հայտարարագրել է 1,500,000 ՀՀ դրամի չափով ստացված եկամուտ՝ եկամտի տեսակը հայտարարագրելով «այլ»: Հանձնաժողովն արձանագրում է, որ Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 17-ի N 04-Ն որոշման Հավելված 2-ի 30-րդ կետով սահմանվում

է հայտարարագրի լրացմանը ներկայացվող այն պահանջը, երբ եկամուտների վերաբերյալ լրացվող տվյալները վերաբերում են համակարգում որպես առանձին տեսակ չնշված՝ «այլ» տեսակի եկամուտներին: Ընդ որում, նույն որոշման 30-րդ կետի համաձայն՝ *Եկամտի «այլ» տեսակի դեպքում անհրաժեշտ է մանրամասն նկարագրել եկամտի ստացման աղբյուրը և հիմքերը:* Վերոնշյալի հաշվառմամբ արձանագրվում է, որ հայտարարատուի կողմից քննարկվող եկամտի «Նկարագրություն» դաշտում լրացված՝ «ԴԴ-ից՝ հարազատի կողմից ուղարկված գումար», իսկ «Հայտարարատուի և եկամուտ վճարողի միջև առկա կապի բնույթը» դաշտում լրացված՝ բարեկամ տվյալների համադրությամբ, ըստ էության, բացահայտվել է եկամտի ստացման աղբյուրը և հիմքերը, սակայն եկամուտը վճարող անձի տվյալները համապատասխան դաշտում չհայտարարագրելու արդյունքում խախտվել է նույն որոշման 33-րդ կետով սահմանված պահանջը, այն է՝ *յուրաքանչյուր հայտարարատու պարտավոր է հայտարարագրել ստացված բոլոր եկամուտներն ըստ տեսակների և առանձին վճարողների, բացառությամբ Օրենքի 41-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված եկամուտների:*

Ընդ որում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում հատուկ ընդգծել, որ սույն դեպքում ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու խախտման բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայտարարատուի կողմից Հանձնաժողովի համար բացահայտված են եղել հայտարարագրման ենթակա էական տվյալները (տեսակը, չափը, աղբյուրը, կապի բնույթը), ինչի արդյունքում ստացված եկամտի օրինականության կամ արժանահավատության ստուգումը դուրս չի մնացել Հանձնաժողովի վերահսկողությունից:

Եկամուտ վճարողի տվյալները չնշելը պայմանավորված է ոչ թե տվյալ հայտարարագրման օբյեկտի թերի ներկայացմամբ, այլ հայտարարագրի լրացման կարգով սահմանված՝ տվյալ եկամուտը ըստ առանձին վճարողների հայտարարագրելու պարտականության չկատարմամբ, որը կարգավորվում է Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 17-ի N 04-Ն որոշման 33-րդ կետով:

Նույն հայտարարագրի «Գ.1.2 Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում էմմա Պալյանը հայտարարագրել է ընդհանուր՝ 25,000,000 ՀՀ դրամ, որից 4,000,000 ՀՀ դրամը որպես սպառողական վարկ և 21,000,000 ՀՀ դրամը՝ հիպոտեկային վարկ: Վերոնշյալ տվյալները համադրվել են նախորդ տարիների հայտարարագրերի համապատասխան տվյալների, ինչպես նաև էմմա Պալյանի 2025 թվականի դեկտեմբերի 2-ին ներկայացված պարզաբանման հետ, որով **2024 թվականի տարեկան հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ»** բաժնի թերությունների վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելուց հետո ավելացրել է, որ «Մյուս երկու կետերի՝ մասնավորապես «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում և «Գ.1.2. Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում տեղ գտած վրիպակները տեխնիկական բնույթի են, որոնք ևս պատրաստ են շտկել», Հանձնաժողովն արձանագրել է, որ էմմա Պալյանը Հայտարարագրի համապատասխան դաշտերը լրացնելիս թույլ է տվել վարկերի վերաբերյալ տվյալների լրացմանը ներկայացվող պահանջները, ինչի արդյունքում իր՝ 2024 և **2023 թվականների** տարեկան հայտարարագրերի քննարկվող բաժնում որպես հիպոտեկային վարկի մայր գումարի մնացորդ հայտարարագրել է **21,000,000 ՀՀ դրամ**, իսկ **2022 թվականի** տարեկան հայտարարագրում՝ **20,643,674 ՀՀ դրամ**, **ինչից բխում է, որ չեն պահպանվել վարկերի վերաբերյալ տվյալների լրացմանը ներկայացվող պահանջները**, քանի որ ըստ լրացված տվյալների՝ ստացվում է, որ **2023 թվականին հիպոտեկային վարկի մայր գումարի չափը նվազման փոխարեն աճել է:**

Միաժամանակ, էմմա Պալյանն իր՝ 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի՝ «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում իր ամուսնու՝ Ալբերտ Մարտիրոսյանի վերաբերյալ տվյալներում ներկայացրել է, որ վերջինս չի աշխատում, մինչդեռ ՊԵԿ էլեկտրոնային շտեմարանում առկա տվյալների համաձայն՝ Ալբերտ

Մարտիրոսյանը 2023 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև օրս աշխատում է «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ում որպես «Անտառապետ», իսկ Ալբերտ Մարտիրոսյանի 2024 թվականի տարեկան հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում առկա են «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ից ստացված աշխատավարձի վերաբերյալ տվյալներ:

Վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ հայտարարատու պաշտոնատար անձի կողմից իր ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների լրացումն ունի առանձնահատկություն, քանի որ դրանք լրացվում են հայտարարագրման էլեկտրոնային համակարգի «Պրոֆիլ» բաժնում, որից հետո համապատասխան տվյալներն ինքնաշխատ եղանակով արտացոլվում են հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում: Ընդ որում, հայտարարատու պաշտոնատար անձն այդ տվյալները լրացնում է իր պաշտոնեական պարտականություններն ստանձնելիս, իսկ դրանից հետո միայն համապատասխան փոփոխություններ է կատարում: Այս ամենի համատեքստում նաև արձանագրվում է, որ հայտարարագրման էլեկտրոնային համակարգի տվյալների համաձայն՝ Էմմա Պալյանն իր պաշտոնեական պարտականություններն ստանձնել է 2021 թվականի մարտի 22-ին և իր տարեկան հայտարարագիրը Հանձնաժողով է ներկայացրել 2021 թվականին, ինչպիսի ժամանակահատվածում, ըստ ՊԵԿ էլեկտրոնային շտեմարանի տվյալների՝ վերջինիս ամուսինը չի գտնվել աշխատանքային հարաբերությունների մեջ:

Ընտանիքի անդամների տվյալների հայտարարագրմանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ Հանձնաժողովի նախորդիվ կայացված որոշումների հետ համադրությամբ՝ արձանագրվում է, որ սույն դեպքում առկա չէ ընտանիքի անդամի վերաբերյալ տվյալների սխալ կամ ոչ ամբողջական հայտարարագրելու դեպք, քանի որ համապատասխան հայտարարագրերում բացահայտված է հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի ամբողջական կազմը, ինչպես նաև օրենքով պահանջվող հայտարարագրերը ներկայացված են եղել

Հանձնաժողով, ինչպիսի հանգամանքների համադրությունն էական է արարքի հատկանիշների քննարկման տեսանկյունից:

Հաշվի առնելով նշվածը՝ Հանձնաժողովը փաստում է, որ սույն մասով ևս առկա է հայտարարատու պաշտոնատար անձ էմմա Պալյանի կողմից հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող կարգի խախտմամբ ներկայացված Հայտարարագիր, որը հիմք է տալիս վարչական պատասխանատվություն կիրառելու՝ նախազգուշացման ձևով, միաժամանակ ընդգծելով, որ պաշտոնատար անձի կողմից հայտարարագրի ներկայացումն օրենսդրությամբ սահմանված պարտադիր պարտականություն է, որի նպատակն է ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձանց ֆինանսական թափանցիկությունը, կանխել շահերի բախման և կոռուպցիոն ռիսկերի առաջացումը, ինչպես նաև հնարավորություն տալ վերահսկող մարմնին իրականացնել կանխարգելիչ գործառույթները: Հայտարարագիրը համարվում է ներկայացված պատշաճ միայն այն դեպքում, երբ այն լրացված է ամբողջական, ճշգրիտ, օրենքով ու նորմատիվ ակտերով սահմանված կարգին համապատասխան:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ է հետապնդում հանրության համար բացահայտել պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ տվյալները, որը, տվյալ դեպքում խաթարվել է էմմա Պալյանի կողմից, հայտարարագրման ենթակա համապատասխան տվյալները Հայտարարագրում չներկայացնելու արդյունքում:

Քննարկվող դեպքում պարզվել է, որ Էմմա Պալյանը ներկայացրել է Հայտարարագիր, սակայն Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջի խախտմամբ, մասնավորապես՝ Էմմա Պալյանը «Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում եկամուտը հայտարարագրելիս եկամուտ վճարողի ազգանունը, անունը և հայրանունը, ինչպես նաև «Եկամուտ վճարողի հասցեն» դաշտում դրել է գծիկ «-» նշանը, այսինքն՝ Օրենքով պահանջվող լրացման ենթակա տվյալները հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտմամբ է ներկայացրել:

Վերոնշյալ տվյալներն, ըստ Օրենքի հանդիսանում են հայտարարագրի պարտադիր բաղադրիչ, քանի որ եկամուտ վճարողի տվյալները, մասնավորապես եկամուտ վճարողի անվանումը, անունը, ազգանունը և հայրանունը, ինչպես նաև հասցեն, հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալներն ուղղակիորեն ազդում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց ֆինանսական վիճակի իրական գնահատման վրա և կարող են էական նշանակություն ունենալ շահերի բախման ռիսկերի գնահատման հարցում: Այդ տվյալների բացակայությունը հանգեցնում է հայտարարագրի լրացման կարգին ներկայացվող պահանջների խախտմամբ ներկայացմանը:

Հաշվի առնելով ուսումնասիրության արդյունքում պարզված փաստական հանգամանքները՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Էմմա Պալյանը «Եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը» և «Եկամուտ վճարողի հասցեն» դաշտերում գծիկ «-» նշան է դրել, փոխկապակցված անձի՝ ամուսնու աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները դաշտում նշել է, որ վերջինս չի աշխատում, ինչպես նաև հիպոտեկային վարկի մայր գումարի դաշտը լրացնելիս վարկի մայր գումարի մնացորդի չափը նշել է 21,000,000 ՀՀ դրամ, այնինչ Էմմա Պալյանի 2023 թվականի հայտարարագրում՝ նշված տվյալներով վարկի մայր գումարի մնացորդի չափը կազմել է 21,000,000 ՀՀ դրամ, իսկ 2022 թվականի հայտարարագրում՝ 20,643,674 ՀՀ դրամ: Հիմք ընդունելով

Օրենքով հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի լրացմանը ներկայացվող պահանջները՝ պարզ է դառնում, որ Էմմա Պալյանի Հայտարարագիրը Հանձնաժողով է ներկայացվել լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ դեպքում հայտարարատու պաշտոնատար անձ Էմմա Պալյանի կողմից իր ընտանիքի անդամի՝ ամուսնու և եկամուտ վճարողի վերաբերյալ տվյալների հայտարարագրումն էական նշանակություն ունի հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության բացահայտման տեսանկյունից: Հայտարարատու պաշտոնատար անձի կողմից իր ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների հայտարարագրումն Օրենքի ձևական պահանջ չէ, այլ Օրենքի իմպերատիվ պահանջ, որի միջոցով ապահովվում է հայտարարատու պաշտոնատար անձի հանրային վերահսկողության տեսանկյունից հանրային հաշվետվողականությունը, գույքային դրության բացահայտման հնարավորությունը, քանի որ հայտարարագրերը՝ դրանց լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտմամբ ներկայացնելու արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը խաթարվում է:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Էմմա Պալյանի կողմից խախտվել է Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 41-րդ հոդվածի 6-րդ մասի և նույն հոդվածի 6.2-րդ մասի պահանջները, ինչը հանգեցրել է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավախախտման, այն է՝ **հայտարարագրերը դրանց լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելուն՝ ինչն առաջացնում է նախազգուշացում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Էմմա Նորայրի Պալյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նախազգուշացում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էմմա Նորայրի Պալյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Էմմա Նորայրի Պալյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ